

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» նոյեմբերի 2021թ.

N ---- Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀԵՆՐԻԿ ՎԱՀԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ
«ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հայկական հեռուստատեսության հիմնադրման 65 և ծննդյան 85-ամյակների առթիվ, հեռուստատեսության և ռադիոյի զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի, արվեստի, գիտության և կրթության ոլորտում ունեցած հաջողությունների համար արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի թատրոնի բաժնի վարիչ Հենրիկ Վահանի Հովհաննիսյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԵՆՐԻԿ ՎԱՀԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հենրիկ Վահանի Հովհաննիսյանը ծնվել է 1936 թվականի հունիսի 26-ին: Ավարտել է Ա. Գրիբոյեդովի անվան հ.41 հայկական միջնակարգ դպրոցը:

1958 թվականին ավարտել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտը:

1958-1961 թվականներին աշխատել է ՀՍՍՀ Մինիստրների Խորհրդին առընթեր ռադիոյի և հեռուստատեսության պետական կոմիտեում՝ որպես հաղորդավար: 1961-1964 թվականներին եղել է ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտի ասպիրանտ: 1965 թվականին պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա:

1965 թվականից աշխատում է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում: 1972 թվականին ատեստավորվել է որպես ավագ գիտաշխատող: 1973-1974 թվականներին աշխատել է ռադիոհաղորդումների և հեռուստատեսության պետական կոմիտեում՝ որպես հաղորդավարական բաժնի գեղարվեստական ղեկավար: 1976 թվականից՝ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտի գիտական աստիճանաշնորհման մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար: 1973 թվականից՝ հայկական սովետական հանրագիտարանի գիտաճյուղային խորհրդի անդամ: 1979 թվականին ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտում պաշտպանել է դոկտորական դիսերտացիա: 1980 թվականին ԽՍՍՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովից (BAK) ստացել է արվեստագիտության դոկտորի դիպլոմ: 1987 թվականին ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտում ատեստավորվել է որպես առաջատար գիտական աշխատող: 1990-1991 թվականներին եղել է ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի պետական կոմիտեի նախագահ: 1991 թվականին՝ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գլխավոր մասնագետ: 1992 թվականից՝ Երևանի Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի գիտական խորհրդի անդամ: 1995 թվականից՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական աստիճանաշնորհման մասնագիտական խորհրդի նախագահ: ՀՀ Նախագահի հրամանագրով 2001 թվականին նշանակվել է հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի անդամ: 2003 թվականին ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովից (ԲՈՀ) ստացել է պրոֆեսորի կոչում: 2006 թվականին ընտրվել է ԳԱԱ թղթակից անդամ:

2004 թվականից՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում թատրոնի բաժնի վարիչ: ՀՀ Նախագահի հրամանագրով 2011 թվականին նշանակվել է ՀՀ հանրային հեռուստառադիոընկերության նախագահի գլխավոր խորհրդական:

Հենրիկ Հովհաննիսյանը հեղինակ է գիտական և հանրագիտարանային հոդվածների: Դասավանդել է Երևանի պետական, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարաններում և Գեղարվեստաթատերական ինստիտուտում: Հեռուստատեսությամբ վարել է մի շարք հեռուստահաղորդաշարեր՝ գրքի, լեզվի, մշակույթի վերաբերյալ, ինչպես նաև նարեկյան ընթերցումներ:

2003 թվականին Հենրիկ Հովհաննիսյանին շնորհվել է ՀՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչումը: Պարգևատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալով, ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալով, «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» և «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշաններով:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի թատրոնի բաժնի վարիչ Հենրիկ Հովհաննիսյանի ներդրած նշանակալի ավանդը հեռուստատեսության և ռադիոյի զարգացման գործում՝ առաջարկվում է Հենրիկ Վահանի Հովհաննիսյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում և Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ՀԵՆՐԻԿ ՎԱՀԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ»
ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՍ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Հենրիկ Վահանի Հովհաննիսյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

**«ՀԵՆՐԻԿ ՎԱՀԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ»
ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՍ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Հենրիկ Վահանի Հովհաննիսյանին «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին» Երևանի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ